

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՈՐՊԵՍ ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ Դ. Մ.

Ժամանակակից քաղաքակրթության առանձնահատկություններից մեկը թարգմանչության հանրային դերի աննախադեպ մեծացումն է: Սա ծառայությունների բազմաճյուղ ոլորտ է՝ իր կազմակերպական, տնտեսական, կադրային, ինչպես նաև դիտական բազմաթիվ հիմնահարցերով: Միաժամանակ՝ բացառիկ է թարգմանչության դերը միասնականացման և ամբողջականացման համաշխարհային գործընթացներում:

Թարգմանչության մշակութային-քաղաքակրթական դերը վաղուց է հայտնի Հայերիս: Տակավին V դարից է ծնունդ առել թարգմանչաց շարժումը, որի շնորհիվ Հայերը ծանոթացել են ժամանակի առաջադեմ մշակույթներին՝ հարստացնելով սեփական արժեքները: Այդուհանդերձ, հայաստանյան անցումային շրջանի շատ ասպարեզներին բնորոշ բարձրթոփի վիճակը թարգմանչության մեջ ևս դրսևորվում է՝ միասնական պահանջների, կարգավորող կառույցների, թարգմանական ու հրատարակչական պատասխանատվության որոշակի մեխանիզմների բացակայության տեսքով: Թարգմանական գործի անբավարար հանրային կազմակերպման և առանձին թարգմանչությունների ցածր որակի հիմնապատճառը նաև տեսական-մեթոդաբանական բնույթի է: Մեզանում որևէ օտար լեզվի անգամ թերատ իմացությունը շատերին բավարար է թվում թարգմանչությամբ զբաղվելու համար, ինչի խիստ վնասակար է գեղարվեստական գրականության գործերի թարգմանչության ասպարեզում: Բարձրարժեք աշխատությունների անկատար թարգմանչության պատճառով հաճախ հեղինակի ասելիքը ոչ միայն նոր ընթերցողների չընթանալին համարժեքորեն չի հասցվում, լեզվամշակութային նոր միջավայրում հարազատորեն չի ընկալվում, այլև նույնիսկ վարկաբեկվում է: Բացի այդ, անխուսափելիորեն աղավաղվում է թարգմանող լեզուն՝ Հայերենը, խճողվում օտարաբանություններով, Հայերենին խորթ լեզվամտածողությամբ:

Մինչդեռ, մենք ոչ միայն թարգմանական, այլև թարգմանաբանական մեծ ժառանգություն ենք ստացել: Նկատի ունենք ամենից առաջ Հովհաննես Թումանյանի վաստակը: Լինելով հմուտ թարգմանիչ՝ Հ.Թումանյանը միաժամանակ արդիական ձևակերպումներ ունի թարգմանչության տեսական-մեթոդաբանական խնդիրների վերաբերյալ: Դա լիովին արդարացնում է նրան արդեն տրված գնահատականը՝ որպես «թարգմանչաց արվեստի գիտական տեսության հիմնադիրներից մեկը մեզանում»¹: Սակայն, որքան էլ տարօրինակ է, իրենք՝ մասնագետները մինչ օրս պատշաճին չեն հենվում Հայ մեծ բանաստեղծի թարգմանաբանական դրույթների վրա:

Թումանյանի համար թարգմանչությունն ամենից առաջ ժողովուրդների հոգևոր փոխհարստացման, շաղկապման և փոխադարձորեն միմյանց ճանաչելու միջոց է: Նա բացառիկ կարևորություն է տալիս Հայերեն թարգմանական աշխատանքներում բարձրարժեք բնագրերի ընտրությանը: Հատկանշական են նրա

¹ Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, Ե., 1994, էջ 553:

մեծարանքը Շեքսպիրի Հանդեպ, Համապատասխան մշակութային ակնկալիքները շեքսպիրյան գործերի թարգմանություններից, Հայ թարգմանչի պատասխանատվության շեշտադրումը: Երբ Հովհաննես Մասեհյանի թարգմանությունը (1894թ.) լույս է տեսնում Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունը, Թումանյանը մեծ խանդավառությամբ է այն ընդունում: Սա ոչ թե սոսկ գրչակցի կամ գրասերի ուրախություն է, այլ երևույթի լայն մշակութաբանական ընկալում: Իր ընդարձակ գրախոսականի (տպագրվել է «Տարազ» Հանդեսում, 1896 թ.) Հենց սկզբում Թումանյանը թարգմանական գործը և հատկապես Շեքսպիրի Հայերեն թարգմանությունը կարևորող մի՝ այսօր էլ կենսունակ դրույթ է առաջ քաշում. «Շեքսպիրը,-գրում է նա,- դարձել է մի չափ ազգերի զարգացման աստիճանն որոշելու համար: Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակի տգետ է, եթե չի հասկանում, կնշանակի տհաս է. եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի տկար է»²: Թումանյանն այս մտքով ձևակերպել է բացարձակ մի ճշմարտություն, որը թարգմանարանական ցանկացած վերլուծության համար կարող է բնաբան ծառայել:

Միաժամանակ, Հ. Թումանյանը մշակութային բացառիկ կարևորություն է տալիս Հայերեն գործերն այլ լեզուների թարգմանելուն: Այսպես, դրվատելով Նահապետ Քուչակի և Սայաթ-Նովայի ստեղծագործությունների ռուսերեն թարգմանվելու փաստը, նա այստեղ ևս անառարկելի, նաև արդի թարգմանչության համար գործադրելի մի սկզբունք է ձևակերպել՝ Հայոց արժեքները ներկայացնել աշխարհին և մեզ ճանաչել ու ըստ արժանվույն գնահատել տալ. «Մենք,-գրել է նա,- ունեցել ենք էդ բարձր վկայականը, բայց էդ վկայականը մնացել է մեր գրպանում, կարդացող չի եղել, դրա համար էլ չունենք էն մեծ փոխադարձ շաղկապը ուրիշ ժողովուրդների հետ: Մենք ենք միայն օտարների Հանճարները ճանաչել, սիրել ու սրտով կապվել նրանց հետ, իսկ մեր ցեղի Հանճարը ոչ ոք չի ճանաչել, դրա համար էլ մեզ ոչ ոք չի գնահատել, չի սիրել ու Հոգեպես չի կապվել մեզ հետ»³:

Որքանով է թարգմանությունը հարազատ բնագրին, որքան է ստույգ փոխանցված նյութի բովանդակությունը, պահպանված են հեղինակի ոճը, լեզվական նրբությունները, մտքի խորությունն ու ձևակերպման անկրկնելիությունը: Սրանք թարգմանությանն առնչվող Հնագույն հարցադրումներն են: Հ. Թումանյանը շատ պատկերավոր ձևակերպել է այն որոշակի թերահավատությունը, որ կա թարգմանության Հնարավորությունների Հանդեպ, և որը հաճախ է դառնում ոչ որակյալ թարգմանչի ինքնարդարացման միջոց: «Թարգմանությունը, - նկատել է նա, - ապակու տակ դրած մի վարդ է. գրեթե անկարելի է, որ թարգմանիչը տա բնագրի հարազատ բույրն ու հրապույրը»⁴: Փայլուն Համեմատություն է, սակայն, այդուհանդերձ, որո՞նք են «բույրն ու հրապույրը», և ո՞ր դեպքում կարելի է արձանագրել, թե թարգմանչին Հաջողվել է Հենց այդ «գրեթե»-ն իրականացնել: Չէ՞ որ Հայ մեծ գրողն ինքը վերոբերյալ մտքին անմիջապես հավելում է. «Սակայն միշտ պահանջելի է, որ նա հավատարիմ մնա գործի մտքին և հասկանալի տա ընթերցողին»⁵: Վերլուծելով Քուչակի և Սայաթ-

² Նույն տեղում, էջ 55:

³ Նույն տեղում, էջ 53-34:

⁴ Թումանյան Հ.Ու., Երկերի լիակատար ժողովածու, հ.7, 1995, էջ 204:

⁵ Նույն տեղում, հ. 6, էջ 121:

⁶ Նույն տեղում:

Նովայի ռուսերեն թարգմանությունները, նա հարկ է համարում արձանագրել, թե «Բրյուսովը թարգմանում է վարպետի ձեռքով՝ աշխատելով հաղթել գրեթե անհաղթահարելի արգելքների»⁷։ Վալերի Բրյուսովն ինքը անհնարինը հնարավոր դարձնելու հավիտենական այդ խնդրի հոյակապ մի բանաձև է գտել. «Բանաստեղծի արածը մի լեզվից մյուսը հաղորդելն անհնարին է, սակայն անհնարին է նաև այդ երազից հրաժարվելը»⁸։

Այսօրինակ դատողություններն ու հարցադրումները ժամանակակից գիտության մեջ ամփոփվում են նույնականության ըմբռնման չրջանակներում որպես թարգմանչական աշխատանքի գործնական և թարգմանաբանության տեսական հանգուցային հիմնախնդիր⁹։ Սա հիմնարար տեսական հարցադրում է թարգմանաբանության և թարգմանչական գործունեության համար։ Այն ամեն անգամ յուրովի լուծում է պահանջում, որը պայմանավորված է օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի մի շարք գործոններով՝ ելակետային տեքստի ժանրային ու գործառական պատկանելությամբ, պահանջվող թարգմանության տեսակով, հեղինակի դիտավորությամբ և դրա թարգմանչական ընկալումով, թարգմանչի հմտությամբ, իրավիճակի առանձնահատկություններով և այլն։

Ինչպես է այդ խնդրին անդրադառնում Թումանյան-թարգմանաբանը։ «Համբերի» մասեհյանական թարգմանությանը նա այնքան մանրամասն է անդրադարձել, նրա դիտողություններն այնքան տեղին ու հիմնավոր են, որ Հ.Մասեհյանը երկրորդ հրատարակության մեջ դրանք լիովին հաշվի է առել։ Չտիրապետելով բնագրի լեզվին՝ անգլերենին, Հ. Թումանյանը որպես միջնորդ լեզու օգտվում է ռուսերենից և հայերեն թարգմանության կասկածահարույց տեղերը համեմատում է 5-6 ռուսերեն թարգմանությունների հետ։

Ահավասիկ, թարգմանության «Իմ կարծիքով տիկինը չափազանց է բողոքում» արտահայտության մեջ Թումանյան-թարգմանաբանին չի համոզում «բողոքում» բայի գործածությունը։ Համատեքստն այլ բառ է պահանջում և հիմք է տալիս եզրակացնելու, որ բնագրի համապատասխան բառը, որպես թարգմանական միավոր սխալ է ընկալվել։ Եվ իսկապես, ռուսերենի հինգ թարգմանիչ որպես այդ բառի համարժեք գործածել են «խոստանալը» («обещает», «наобещала», «надавала...много клятв», «много наобещала», «слышком много надавала обещаний»)։ Թարգմանաբանը, այսպիսով, դիմում է համեմատության մեթոդին և միջնորդ լեզվում առկա համարժեքներով ճշգրտում անգլերենի հայերեն թարգմանության համարժեքության իսկությունը¹⁰։ Ինչպես ասվեց, թարգմանիչն ընդունել է դիտողությունը և չտկում մտցրել երկրորդ հրատարակության մեջ. «Տիկինը չատ է երգվում, կարծեմ»¹¹։

«Բողոքում» - «երգվում» չփոխը բնավ էլ սոսկ բառիմաստային բնույթի է։ Բանն էլ այն է, որ չեքսպիրյան տեքստում «protest» բառն է՝ «բողոքել» բառարանային իմաստով. «The lady doth protest too much, methinks»¹²։ Թարգմանիչը դա բառացի է ընկալել, այսինքն՝ թույլ տվել տառացիաբանության

⁷ Նույն տեղում, հ. 7, էջ 203։

⁸ Хрестоматия по теории перевода. Е., 1999, с.76

⁹ Տե՛ս Ն ա գ ա ղ յ ա ն Ա . Հ . , Բ ա ղ դ ա ս ա ղ յ ա ն Հ . Գ . , Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ, Ե., 2000, էջ 67- 68։

¹⁰ Թ ու մ ա ն յ ա ն Հ ո վ . , Երկերի լիակատար ժողովածու, հ.6, էջ 74։

¹¹ Շեքսպիր Վ., Ընտիր երկեր, հ. 1, Ե. 1964, էջ 93։

¹² Shakespeare W., Hamlet. London: 1980, p. 137։

սխալ¹³, մինչդեռ նա պիտի կողմնորոշվեր հեղինակի դիտավորությունը: Համլետի ցուցումով՝ դերասանները խաղարկում են մի տեսարան, որտեղ թագուհին թույն է լցնում քնած ամուսնու ականջը, թեև մինչ այդ տաք-տաք երգվում էր հավատարմություն, հավիտենական սիրո մեջ: Եվ երբ թագավորը որոշակի կասկածամտություն է դրսևորում, բեմական թագուհին սաստկացնում է իր երգումները՝ արդարացի բողոքողի տեսքով, մի բան, որ արձանագրում է իրական թագուհին՝ Համլետի մայրը, ասելով, թե դերասանուհին կասկածելիորեն «չատ է երգվում»:

Եվս մեկ ուսանելի օրինակ թումանյանական վերլուծությունից: «Դուք ավելի կարծեք, քան թե երգիչների մի ամբողջ խումբ, տեր իմ»: այսպես է արձագանքում Օֆելյան Համլետի այն մեկնաբանություններին, որոնցով նա թագավորին բացատրում է ցուցադրվելիք ներկայացման բովանդակությունը: Ռուսերեն տարբերակները բոլորն էլ հենց «երգչախումբ» համարվեցին են տալիս («хор»), ինչը հուշում է, որ անգլերեն բնագիրն էլ է նույնը («chorus») ¹⁴: Այսինքն՝ կարծեք Մասեհյանի թարգմանությունը միանգամայն համարվեք է արված՝ «երգչախումբ», նույնն է թե՛ «երգիչների մի ամբողջ խումբ»: Թարգմանաբանը, սակայն, խնդրին մոտենում է պատմամշակութային տեսակետով: Այդ «chorus»-ը Շեքսպիրի ժամանակ այն մարդն է եղել, ով խաղի ընդմիջումներին բեմ էր գուրս գալիս և հանդիսականներին բացատրում թատերգության մոլթ տեղերը: Ուստի, ըստ բնագրի, Օֆելյան հենց դա է ուղղում ասել, այն է՝ Համլետը շատ լավ մեկնաբանում, բացատրում է խաղի բովանդակությունը ¹⁵: Այստեղ է ահա սայթաքել թարգմանիչը. բառիմաստը գուրս բառարանային նշանակությամբ ճշգրիտ թարգմանել է, սակայն անտեսել է մշակութային, գործաբանական հանգամանքները: Դարձյալ նկատենք, որ Հ. Մասեհյանը ընդունել է շտկումը, ավելին՝ գտել է սքանչելի լուծում. «Դուք այնպես լավ եք մեկնաբանում, ինչպես խաղի նախերգակը» ¹⁶:

Հ. Թումանյանի օրինակը, թերևս, բացառություն է, և մենք դա բերեցինք «Թարգմանիչ - Թարգմանաբան» գործառական համեմատության նպատակով, ավելի ցայտուն ներկայացնելու մեր այն միտքը, որ թարգմանաբանը կարող է անգամ չիմանալ բնագրի լեզուն, սակայն հնար գտնել գնահատելու թարգմանվածքի արժանիքները: Սա, կրկնում ենք, օրինաչափություն չի կարող լինել: Ցանկալի է, անտարակույս, որ թարգմանաբանը գոնե չղիջի թարգմանիչի լեզվիմացությունը: Հավելենք, որ Հ. Թումանյանը տարիներ անց անդրադառնում է սեփական լեզվիմացության այդ խնդրին՝ հիշատակելով, թե ոմանք նրա քննադատությունն անխոհեմ են համարել՝ նկատի ունենալով անգլերեն չիմանալու պարագան: Թումանյանը դրում է, որ իր խնդրանքով բոլոր սխալները անգլերենի քաջ գիտակ իր մի բարեկամի՝ Մ. Տեր-Անդրեասյանի շնորհիվ ստուգվել են և հաստատվել: Բացի այդ, հայ մեծ գրողը (որ, ինչպես հայտնի է, սկսել էր անգլերեն սովորել) հետագայում ձեռք է բերում անգլերեն բնագիրը և սեփական դիտողությունները մեկ անդամ ևս ճշգրտում ¹⁷:

¹³ Տե՛ս նազարյան Ա. Հ., Բաղդասարյան Հ. Գ., նշվ. աշխ., էջ 105-106:

¹⁴ Իրոք այդպես է. «You are as good as a chorus, my lord» (W. Shakespeare, Hamlet, էջ 137):

¹⁵ Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, էջ 74-75:

¹⁶ Շեքսպիր Վ., Ընտիր երկեր, հ. 1, էջ 93:

¹⁷ Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, էջ 465:

Թարգմանչի առավելությունը, անշուշտ, լեզուների խոր ու բազմակողմանի իմացությունն է, իսկ թարգմանարանի առավելությունը թարգմանության բովանդակ երևույթի առավել լայն ու համակողմանի դիտարկումն է: Թարգմանիչը կարող է և իրավունք ունի լիովին պարփակվելու իր նեղ մասնագիտական նպատակադրումների շրջանակում, բնավ չխորանալ իր արածի մշակութային և գործաբանական այլևայլ առնչությունների մեջ: Թարգմանարանի վերաբերմունքն ավելի աշխարհայացքային է, համընդգրկուն: Նա կարող է անգամ գիշել զուտ լեզվիմացության առումով, տեղյակ չլինել մասնագետ-թարգմանչի բոլոր հնարքներին, միայն վերջինիս հասու ներություններին:

Օրինաչափ ու օրինակելի կարելի է համարել թարգմանարանի և թարգմանչի այն համագործակցությունը, որ տեսնում ենք Հ. Թումանյանի և Հ. Մասեհյանի դեպքում:

Այսպես, մի կողմից, Հ. Թումանյանը խստապահանջ քննադատ է, ինչն ինքնին բխում է թարգմանարանի դերակատարումից: Հատկապես անգիշում է նա, օրինակ, բառախաղերի թարգմանության հարցում, չի ընդունում թարգմանչի բացատրություններն ու ընթերցողների ներողամտությունը հայցելը: Այս կապակցությամբ մեջբերենք Հ. Թումանյանի, մեր կարծիքով, սկզբունքային ու արդիական-մեթոդաբանական արժեքը պահպանած բանաձևը. «Մենք՝ ընթերցողներս, չենք կարող և իրավունք էլ չունենք ներողամիտ լինելու, եթե Շեքսպիր փոխադրողը բնագրից չեղվում է, տալիս է մի համանման բան, այն էլ ոչ այնքան ընտիր: Այսպիսի դեպքերում թարգմանիչը լավ կաներ, որ յուր հույսը փոխանակ ընթերցողի ներողամտության վրա դնելու՝ յուր կարողամտության վրա դնելու»¹⁸: Սկզբունքային այս պահանջկոտությունը (հընթացս՝ հոյակապ բառախաղը՝ ևս մի ապացույց այն բանի, որ, հայերենի բառակազմական ճորս հնարավորություններն ունենալով, թարգմանիչը չպետք է խեղճանար բառախաղեր թարգմանելիս) զուգակցվում է թարգմանարանական նրբանկատությանը: Հ. Թումանյանը թարգմանչին չի պարտադրում ուղղումը: Նա միայն թարգմանական սխալն է մատնանշում, բացահայտում լեզվաոճական ու տրամաբանական անհարթությունները, դրանց չտրվում թողնելով գործի արհեստավար ժին՝ թարգմանչին:

Ըստ բնագրի «լեզվաբանական արժանիքների աստիճանակարգման» վերաբերյալ ներկայումս կայունացած հայեցակարգի, գերադասելի է համարվում, նախ՝ բառային-իմաստային նույնականության ապահովումը, այնուհետև՝ բնագրի ոճական յուրահատկությունների նույնական հաղորդումը թարգմանվածքի մեջ և, վերջապես, բնագրի քերականական կողմի պահպանումը¹⁹: Ընդհանուր առմամբ բնագրի ոճական բնութագրերն ինքնանպատակ չեն, այլ ենթարկվում են գործածված բառամիջոցների հեղինակային մտահղացման բացահայտմանը: Ավելին, թե՛ բնագրի, թե՛ թարգմանող լեզվի քերականական համակարգերի թարգմանական առնչությունները ենթարկվում են իմաստային նույնականության պահպանմանը: Դրա հետ մեկտեղ, եթե, ասենք, բացարձակ իմաստային նույնականության պահպանումը մասամբ կարող է փոխհատուցել բնագրի ոճական արժանիքների թարգմանության որոշ անհարթությունները, ապա հակառակը պնդել չենք կարող. ոճական անհաջող թարգմանությունը կարող է վնասել

¹⁸ Նույն տեղում, էջ 66:

¹⁹ Шейнман В. Е., Пособие по переводу с французского языка на русский, М., 1987, с. 13:

իմաստային նույնականությունը, հատկապես գեղարվեստական թարգմանություն դեպքում: Օրինակ, եթե որևէ չափածո գործ նույնաբնույթ ժանրի շրջանակում թարգմանության փոխարեն վերածենք արձակի կամ էլ բարձր ոճի շարադրանքը թարգմանենք վարչագրասենյակային ոճով, ապա, եթե համոզվենք անդամ, թե ապահովել ենք իմաստային նույնականություն, միևնույն է, բնագրի գեղարվեստական արժանիքների մի կարևոր մասն անդառնալիորեն կկորչի:

Այդուհանդերձ, այստեղ մի կարևոր հանգամանք ևս կա, որին ժամանակին ուշադրություն է դարձրել Հ. Թումանյանը, և որը, կարծես, մոռացության է տրվել: Իսկ չէ՞ որ բնագրի ոճական առանձնահատկությունները համարժեքորեն հաղորդելը նաև թարգմանող լեզվի արժանիքների հաստատումն է: Թումանյանական հիմնադրույթներից մեկն էլ հենց այդ է. գնահատելով «Համբերի» մասեհյանական թարգմանության որակը՝ Հ. Թումանյանը նկատում է, թե «ինչ արժանավայել ճոխություն բխում է հայոց լեզուն Դանիայի արքայազնի բերանում», այնպես որ հենց լեզվաոճական նույնականության ապահովման առումով դրա հետ «ռուսական լավագույն թարգմանությունները դժվար թե համեմատվեն»²⁰:

Թարգմանաբանի վարվելակերպին առնչվող մի դաս էլ կարող ենք առնել Հ. Թումանյանից: Ինչպես ասվեց, նա մանրամասն վերլուծել էր Հ. Մասեհյանի 1884 թ. թարգմանությունը, և թարգմանիչը հիմնովին բարեփոխել էր թարգմանվածքը երկրորդ՝ 1921 թ. հրատարակության մեջ: Մինչ այդ, սակայն, 1899-ին հրապարակում հայտնվեց «Համբերի» ևս մի թարգմանություն՝ Գարեգին Բաբաջյանի աշխատասիրությամբ: Այս թարգմանիչը փոքր-ինչ քամահրանքով է խոսում նախորդի աշխատանքի մասին՝ վկայակոչելով նաև Հ. Թումանյանի քննադատական հոդվածները: Սակայն վերջինս անդրադառնում է նոր թարգմանությանը՝ հենց սկզբից հայտարարելով, թե չի «հավանում» Բաբաջյանի այս կեցվածքը: «Սրտագին ոգի ունելով» նոր թարգմանությունը՝ Հ. Թումանյանը, նախ, խոստանում է թարգմանչին ցույց տալ, որ նոր թարգմանությամբ չեն հաղթահարվել նախկինի թերությունները: Այսպես, Գ. Բաբաջյանը, չընդունելով վերոբերյալ «chorus»-ի մասեհյանական «երգիչների մի ամբողջ խումբ» սխալ թարգմանությունը, այն փոխարինել է մեկ ուրիշ սխալ համարժեքով՝ «խմբերգ»-ով: Ի լրումն՝ նա բնագրից բաց է թողել որոշ հատվածներ, որոնք կան Հ. Մասեհյանի թարգմանվածքում: Բացի այդ, ավելի կարևոր է թարգմանաբանի սկզբունքային դիրքորոշումը. «Եվ թող նա չկարծի, թե այս տեսակ նկատողություններով դիտավորություն ունենք հերքելու իր, ինչպես և իր նախորդի, գործի լրջությունն ու կարևորությունը»²¹:

Հիրավի, թարգմանաբանի գործունեությունը, ինչպես թարգմանական միավորի վերլուծության, այնպես էլ մյուս մասնավոր ու ընդհանուր խնդիրների ասպարեզում, նպատակ ունի ոչ թե նսեմացնելու թարգմանչի արածը (ինչը բարոյապես անթույլատրելի է թեկուզև ժամանակային առումով թարգմանվածքն արդեն առարկայացած իրողություն է և դյուրին է դրա մասին դատողություններ անելը), այլ հնարավորինս բարելավելու թարգմանչությունը՝ որպես լեզվամշակութային հաղորդակցման տեսակ:

Սա գործարանական նույնականության ապահովման խնդիրն է: Այս

²⁰ Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ.6, էջ 463, 461:

²¹ Նույն տեղում, էջ 125:

առումով՝ թարգմանությունը անանձնական միջնորդավորում է: Թարգմանիչը կարծես երկատվում է. հեղինակի մտադրությունները թարգմանալով հանդերձ, նա, փաստորեն, ներկայանում է որպես հեղինակ՝ համապատասխան լեզվակիրների համար: Միաժամանակ՝ թարգմանիչը, հանուն նշված նպատակի, պետք է պահպանի ու ելնի իր «ես»-ից, քանի որ միայն այդ կերպ նա կարող է լեզվամշակութային նոր համակարգին հարազատորեն հաղորդել բնագրի հեղինակի մտադրությունները, ասել է թե՛ ապահովել թարգմանության համարժեքությունը: Առավել բարդ է թարգմանչի անելիքը չափածոյի պարագայում: Հավանաբար, արդարացի է այն հանրահայտ ասույթը, թե «թարգմանիչը արձակում ստրուկ է, իսկ չափածոյում՝ մրցակից»²²: Իսկապես, այստեղ բնագրի հեղինակն ու թարգմանիչը մրցակցություն մեջ են հայտնվում: Սակայն դա թարգմանչի (մանավանդ՝ բանաստեղծ-թարգմանչի) ինքնուրույն ստեղծագործության, հեղինակի հետ չափվելու, նրա մտահղացումները յուրույի վերամարմնավորելու գայթակղություն հետևանք չէ: Պատճառն ավելի խորքային է, առնչվում է թարգմանության բուն էությունը: Հաճախ բնագրի բանաստեղծական միջոցներն իրենց լիակատար համարժեքները չեն ունենում թարգմանության լեզվում, այնպես որ թարգմանական հնարների գործադրումը՝ փոխհատուցումը, ընդլայնումը և այլն, անխուսափելիորեն պարտադրում են նոր բանաստեղծական միջոցների գործադրում:

Սա մեզ տանում է դեպի ավելի ընդհանուր մի հիմնախնդիր՝ տարբեր մշակույթների միջև առկա ընդհանրություններին ու տարբերություններին: Իսկապես, եթե մշակույթներն առհասարակ անկրկնելի են, ապա զուր է ակնկալել ու նաև պահանջել բնագրի և թարգմանվածքի միջև մշակութային բացառական համարժեքություն: Այս անկրկնելիության կանխադրույթն է հենց, որ հարուցում է որոշակի «թարգմանական ժխտողականություն»՝ թարգմանության իսկ հնարավորության ժխտում: Մինչդեռ, եթե ելնում ենք հակադիր կանխադրույթից, այն, որ թարգմանվածքը բնավ էլ բնագրի պատճենումը, կրկնօրինակումը չէ, այլ հեղինակի մտադրության վերահաղորդումը նոր լեզվամշակութային միջավայրին, ապա հնարավոր է դառնում թե՛ թարգմանությունը՝ որպես երևույթ ու մարդկային գործունեություն տեսակ, թե՛ դրա արգասիքի՝ թարգմանվածքի գնահատումը որոշակի չափանիշներով:

Թարգմանության նույնականության ապահովման արդյունավետ, թեպետ վերջին տարիներին նվազ գործածական միջոց է դարձել թարգմանչի սեփական ասելիքը՝ մեկնաբանությունների ու բացատրությունների տեսքով: Չենք կարծում, թե դրանց առկայությունը կարելի է համարել, ասենք, թերատ թարգմանության ինչ-որ արհեստական լրացում: Ընդհակառակը, պատշաճ ու բովանդակալից ամեն մի մեկնաբանություն, որը նպաստում է թարգմանվածքի համարժեք ընկալմանը, պետք է միայն ողջունել, այլ ոչ թե խուսափել դրանից: Դա իսկապես լրացում է, սակայն անհրաժեշտ, բարենպաստ լրացում, ու թերևս այն կարելի է անվանել թարգմանության «լրացուցչության սկզբունք»՝ ոչ պակաս արժեքավոր, քան թարգմանչի հիմնական աշխատանքը: Ըսկ թարգմանաբանի համար, նման «ստորատակային» ու «ծանոթագրային» պարզաբանումները պարզապես անգնահատելի նյութ են բուն թարգմանչի գործունեությունը գնահատելիս, մասնավորապես

²² Миньяр-Белоручев М. К., Как стать переводчиком? М., 1999.
с. 33:

Թարգմանության նույնականությունն ապահովելուն ուղղված նրա ջանքերը վերլուծելիս:

Թարգմանվածքն ուղեկցող այդ մեկնաբանություններն ու բացատրությունները կարող են վերաբերել թե՛ թարգմանության իմաստային կողմին (այս կամ այն բառին, արտահայտությանը, ձևակերպումին, ասելիքի հեղինակային դիտավորության լրացուցիչ պարզաբանմանը), թե՛ ոճական կողմին (օրինակ՝ հավելյալ տեղեկություններ բնագրային բառախաղերի վերաբերյալ, երբեմն՝ «անթարգմանելի» խոստովանություն-ծանուցումով, ինչպես նաև ոճական արժեք ներկայացնող նորաբանությունների, միայն տվյալ հեղինակին բնորոշ արտահայտչամիջոցների մասին և այլն), թե՛ գործարանական կողմին, մանավանդ՝ երկու մշակութային միջավայրերի զգալի տարբերությունների պարզադրում (հեղինակային միտքը կամ պատկերը թարգմանող լեզվամշակութային համակարգի հասցեատերերին հնարավորինս մատչելի դարձնող պարզաբանումներ):

Զուր չէր Հ.Թումանյանը նույն «Համլետի» մասեհյանական թարգմանության կապակցությամբ (այդքան զովեստով հանդերձ) թերություն համարում հատկապես նմանօրինակ մեկնաբանությունների բացակայությունը, որոնք «կարևոր են թե՛ թարգմանչի համար, որ ցույց տա, թե այս ինչ տեղն ինչու այսպես է թարգմանել և ոչ այնպես, և թե՛, մանավանդ, ընթերցողի համար, որ կարողանար Շեքսպիրը պարզ հասկանալ»²³: Պակաս կարևոր չէ Հ.Թումանյանի նշած մյուս թերությունը՝ առաջաբանի բացակայության կապակցությամբ²⁴: Այսպիսով, թարգմանական առաջաբանը (կամ վերջաբանը) արժեքավոր է թե՛ ընթերցողի համար, հատկապես, երբ միանգամայն անծանոթ հեղինակ է մուտք գործում նոր լեզվաշխարհ, և թե՛ թարգմանաբանի վերլուծական աշխատանքի համար, վերստին հանուն ընթերցողի՝ ընթերցող-հասցեատիրոջն ուղղված թարգմանվածքի բարելավման:

Ամփոփելով նկատենք, որ թարգմանաբանի դերը որոշակի առումով նման է գրաբնագործի դերին. իր իսկ աշխատանքի բնույթով, նպատակադրումներով նա պարտավոր է համեմատել բնագիրն ու թարգմանվածքը և այդքանով գնահատել թարգմանչի կատարածը: Մեզանում կարծես թե ընդունված չէ թարգմանչական աշխատանքների մասին գրախոսականներով հանդես գալ: Մինչդեռ, եթե գրաբնագործը կարող է հանդես գալ կամ չգալ դրական նորույթի մասին իր կարծիքով, ապա թարգմանաբանը պարզապես չի կարող խույս տալ թարգմանվածքի մասին իր կարծիքն արտահայտելուց: Մնում է, որ թարգմանիչն ու թարգմանաբանը գիտակցեն իրենց շահերի համընկնումը և տողորվեն արդյունավետ համագործակցության ոգով: Այստեղ նրանց փոխլրացնող ջանքերը լավագույնս կարող է ուղղորդել Հ. Թումանյանի վաղեմի մի ձևակերպումը՝ թարգմանաբանը, ակամա հայտնվելով քննադատի դերում, բնավ նպատակ չունի նսեմացնելու մասնագետ թարգմանչի կատարածը, որ լուրջ թարգմանությունը կարիք է զգում և արժանի է «լուրջ քննադատության»²⁵:

²³ Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, էջ 55:

²⁴ Տե՛ս նույն տեղում:

²⁵ Նույն տեղում, էջ 58, Շեքսպիր, Համլետ, Թարգմ. Գրեգորի Հ. Բարազյան, Վիեննա, 1899, էջ 125:

ОВАНЕС ТУМАНЯН - ПЕРЕВОДОВЕД

КАЗАРЯН Д. М.

Резюме

Ованес Туманян рассматривает перевод в широком социокультурном контексте, при этом формулирует ряд важных методологических принципов теории перевода. Примером плодотворного сотрудничества переводоведа и переводчика могут служить взаимоотношения Туманяна-переводоведа и переводчика "Гамлета" – Ованеса Масегяна. Как рецензент-переводовед, Ованес Туманян принципиален до беспощадности к переводческим погрешностям. Однако он уважительно относится к труду переводчика, требует такого же отношения от других. Кредо Туманяна: перевод – это серьезное занятие, которое нуждается в серьезной критике.